

LIPANAN

Journal Arménien
POLITIQUE - LITTÉRAIRE

RÉDACTION - ADMINISTRATION

Place des Canons, 9, Rue d'Italie
BEYROUTH «Liban»

ԼԻԲԱՆԱՆ

Ազգային - Քաղաքական - Գրական

ԱՆԿԱՆ ՀԱՅԱԹԵՐԹ

(لبنان) جريدة ارمينية سياسية ادبية اقتصادية حرة

ԾԱՐԱԹ

4

ՀԱՅԱՍՏԱՆԻ
1930

Բ Ա Տ Ն Ե Գ Ի Ն

ՄԱՐԿԷ	ՏՐԿԵ	ՎԵՐԱՄԷ	ԽՈՒՄԷ
350	175	125	
ԿՐԹԱՆՈՒՄԱՆ	6	4	2 ԳՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿՈՒՆԵՐՆԵՐ

ԳԵՐՄԱՆ ԸՆԴՎԱԶՈՒՄԸ (Բ.)

Զորավարը, գերանագիտական շրջանակներում ընդհանուր կարծիքը շատ մոտեն ճանաչելով, կը տարակուսի թէ յաղթական տեղութիւններ ի վիճակի պիտի ըլլան ճնշում բանեցնել ընդդէմ Գերմանիոյ վրայ:

Զորավար Վէյլիանի կասկածը, կասկածն է միանգամայն յաղթական տեղութիւններում որոնց կը պակասի զինագործարեան համագործակցութիւնն ու փոխադարձ վստահութիւնը:

Եւ Գերմանիա լաւ տեղեակ ըլլալով այս ցաւալի իրականութեան ազգայնական շարժումի խորումը կը ջանայ ի գլուխ հանել:

«Գերմանական բանակը և խաղաղութիւնը» բառերով որակուած իր յօդուածով, Բոլոնիոյ Ազատարարը թարգմանը եղած կ'ըլլայ Գերմանական ազգայնական շարժումով մտահոգուած մարդկութեան, նկատի ունենալով որ Գերման զինուորականութեան հիմնադիր Յիտլերի վիշտով ծանօթ պատգամի համաձայն Գերմանիա կը ներկայացնէ ճիշդակոտոր բայց ոչ արմատախիլ մի ծառ որ մէկ երկու տասնեակ շրջանի մը ընթացքին արծաւ կած է նոր ճիւղեր: Զորավարը կը մտահոգուի մասնաւոր կերպով անոր համար որ Գերման նոր Սերունդը աւելի մեծ ատելութիւն կը սնուցանէ զանախիցներու հանդէպ քան թէ ախ սերունդը որ անոնց հետ պատեհազմեցաւ ու անոնց գեղակներուն առջև խոյս տուաւ: Զոր. Վէյլիան կը յիշէ երկաթեայ վարչապետին՝ Պիլզմարքի այն խօսքը թէ Գերմանիոյ անտեսական ու քաղաքական պայմանները ոչ թէ ճանդարձ կամ քուէներով այլ կրակով ու երկաթով միայն կարելի է բարեփոխել:

Զոր. Վէյլիան աւելի կը ծանրանայ Գերմանիոյ զինուորական թաքուն պատրաստութեանց վրայ որ այսօր ի գլուխ հանուած իրողութիւն մէջ չընորհիւ Ֆոն Եէքելի անստղծութեան ջանքերուն ու յամառ գործունէութեան:

Վերսայլի զաշնագիրը զրկած էր Գերմանիան օրինաւոր բանակէ, կանոնաւոր սպանազինութիւնէ, զօրակոչէ և անոր յատուկ պահեստի ոյժերէ, սպայակոյտէ, ծովային, ցամաքային և օդային ոյժերէ:

Զոր. Վէյլիան իր «Գերմանական բանակը և խաղաղութիւնը» պատգամով կը ծառանայ անոնց դէմ որոնք Վերսայլի պարտադրած սեղմումներուն կամազուրկ մէկ գործադրողը կը կարծէին նկատել Գերմանիան:

Գերմանիա արտաքինապէս լաւ ու համակերպող և սակայն ներքինապէս արթնն ու աշաւուր էր:

Վերսայլի զաշնագրով պարտադրուած ստիճանափակ թիւով կամաւոր բանակ մը բաւական եղաւ թաքուն և մէթոտիկ աշխատանքներով իր-րեկ կորիք ծառայելու Գերմանական մեծ բանակի մը պատրաստութեան բնականաբար ի պահանջել հարկին, ծովային, ցամաքային և օդային ամենաարդիական զէնքերով սպառազինուած: Ֆոն Եէքել զինուորական և թէք-նիք տեսակետով զինուորական բաւականաչափ ոյժ մը ապահովելով չբաւականացաւ. անիկայ համեմատաբար յառաջացուց նաև Գերմանիոյ ճարտարարուեստական և տնտեսական մակարդակն ալ որպէսզի կարելի ըլլայ ընդհանուր զօրակոչի պարագային չնկերկիլ նիւթական զօնարուցանող առ-ջև: Ու այսօր չնորհիւ Ֆոն Եէքելի մէթոտիկ կազմակերպութեան պարտաւոր Գերմանիա այժմ օժտուած է սպառազինուած պահեստի ոյժով, փորձառու սպայակոյտով, օդային բաւականաչափ կազմաւորով, որոնք ներկայիս առեւտրական ձեռնարկներու կը յատկացուին իսկ ի պահանջել հարկին՝ պատեհ-րազմական ամենամանր գործողութեանց վասնզի անոնք կոչուած են կա-տարելու միանգամայն և հրաշալի կերպով գերը ծանր հրետանիի զօր չի-նելու թաղիքները և Գերմանիան Վերսայլի զաշնագրով:

Բաղբակներու քթին առջև կատարուած այս հրաշանման նախա-պատրաստութիւնները բացի Եէքելի զինուորական հանձարէն պէտք ունին նաև նիւթական հսկայ գումարներու: Ֆոն Եէքել Գերման ժողովուրդին հետ ձեռք ձեռքի (ինքը ծագումով աւստրիացի է) հայթայթեց հարկ եղած զրա-մական վարկերը, բայց նկատելով որ զաշնակցներու ուշադրութիւնը կա-րգ էր հրաւիրել հնարաւորութիւններով, պարզապէս սուտերով, յաւելումներ և նորանոր վարկեր բարդեց պետական պիտոճէին վրայ ու զը-լուխ հանեց իր ծրագիրը:

Զոր. Վէյլիանի ծանօթ յօդուածի վերջին մասը կը պարունակէ գեր-մանական ոյժերու թուական տուեալները: Գերման զօրաւոր սպայակոյտը, ըստ Զոր. Վէյլիանի, իր արմատաւորութեան ներքեւ պիտի ունենայ երեք բա-նակներ իւրաքանչիւրը բաղկացած 10 զօրաբանակներէ որոնք կը պարուն-նակեն 2 հետեակ և մէկ ձիաւոր զօրաբանակներ, Սպայակոյտը պիտի պա-րունակէ 20 գնդապետ, 104 փոխ-գնդապետ և բաւականաչափ հազարապետ, հարիւրապետ և յիսնապետներ:

Ֆոն Եէքել իր կազմակերպութեան նիւթական մասը յաղորդեցաւ ա-սպանով չնորհիւ Հայրենասիրական Միութեանց, որ 1200 մասնաճիւղե-րու ցանցով մը պատած է Գերմանական կարեւոր կենտրոնները:

«Այսօր Գերմանիա ունի 350,000 մարդուած զինուորներ» կ'ըսէ Ժէն. Վէյլիան, որոնք զօրակոչի պարագային առաջին կոչին պատրաստ են ի լւ-պա գրուելու մինչդեռ Վերսայլի ձախաւեր զաշնագիրը Գերմանիոյ թիւը կատար 100,000-նոց կամաւոր ոյժ մը պահել, 12 տարուան զինուորական ծառայութեամբ ամէն տարի առաւելագոյն 5000ը արձակելու: Եւ նոր ոյժե-րով փոխարինելու պայմանաւ: Այս թղթուածութիւնն ալ օգտագործեց Ֆոն Եէքել ամէն տարի արձակուած զինուորներու համեմատութիւնը 15 առ հա-րիւսդ վերածելով, այնպէս որ կամաւորական բանակի (բայսպէլը) հետ յետ վերագործարեան տասը տարիներու ընթացքին 280,000 թաքմ ոյժեր մար-դեցան:

ԹԻՔ. ԼՈՒՐԵՐ

ԿԱԶԻ ՓԱՇԱՆ
ՑԿԵԱՆՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Էնկիւրի. — Շուէտի հեռագրա-կան գործակալութեան այստեղիներ-կայացուցիչը հետեւեալ հեռագիրը ղրկած է իր թերթերուն.

«Սէրպէսի կուսակցութեան պետ Ֆէթիի պէյ նամակով մը զիմած է կազմի փաշային և առաջարկած է որ ան ցեղանոս Հանրապետութեան նա-խագահ ընտրուի ու այս ձեռով կու-սակցութիւններէն վեր ծնայ և ամ-բողջ ազգին սեփականութիւնն լը-լայ...»:

Այս հեռագրին լուրը առնելուս պէս, Ֆէթիի պէյի զիմելով հարցու-ցի.

— Ժ՛րէք է այս լուրը:
Ֆէթիի պէյ յայտնեց թէ նամա-կով չէ առաջարկած կազմի փաշային ցեղանոս Հանրապետութեան նախա-գահ դառնալ և աւելցուց.

«Միայն այն կարծիքն ունիմ թէ կազմին բարձր և ուժեղ ան-նաւորութիւնը, որ յաւիտենական յարգանքի իր տեղը գրաւած է ազ-գին սիրտին մէջ, պէտք է մնայ իր ազգին և ոչ թէ իր կուսակցու-թեան մը սեփականութիւնը, և ազ-գը տեսականօրէն պէտք է օգտու-անոր խորհուրդներին և ղեկավա-րութենէն: Ասոր համար, հրահնդ կ'ուզեմ այն սկզբունքի մասին թէ Հանրապետութեան նախագահը ուղ-ղակի ժողովրդական քուէարկու-թեամբ ընտրուի:

Հետեւեալը, անտեղի է հիմակ-ուրէն կարծիք մը յայտնել որպէսզի խնդիրը և վերջնական ձև մը առնէ, բնականաբար ամէն բանէ առաջ ան-հրաժեշտ է կազմի փաշային հաւա-նութիւնը առնել:

ՖԵՅԶԻ ՊԵՅ ԿԱԶԻ ՓԱՇԱՅԻՆ ՍՕՏ

Ֆէթիի պէյ առջի օր Էնկիւրի հասաւ, ինչպէս գրած էինք երէկ: Մանրամասն տեղեկութեանց համա-ձայն, Սէրպէսի կուսակցութեան պետին համար շատ դժուար կարելի եղած է մասնաւոր ինքնաշարժ գտնել, որովհետեւ օստիկանութիւնը զոյր ինքնաշարժներ վարձեր էր, հաւանական ցոյցի մը արգելք ըլլա-լու համար, ինչպէս կը հաղորդէ «Սոս Փօսթալ» թղթակիցը:

Կէս օրէ վերջ, Ֆէթիի պէյ կազմի փաշային իր մեծարանքները յայտ-նելու գացած է Մարմար Բէօշլը ուր յետոյ գացած են նաև Նուրի և Թահսին պէյերը: Ֆէթիի պէյ գիշերը գարձեալ կազմի փաշային քով գա-ցած և մինչև ուշ ատեն մնացած է:

ԿԱԶԻ ՓԱՇԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԷ
ԵՐԵՍՓՈՒԱՆՆԵՐՈՒՆ

Էնկիւրի. — Երէկ, Ազգ. ժողովի նիստին վերջ, յիտու վախճան ե-րեք փոխաններ Հանրապետութեան նախագահին շուրջ հաւաքուած և ըզըզած են նոր կուսակցութեան գործիչներէն և այս բերքով:

Երկրին մէջ գտնուած յետադիմա-կաններուն համարձակութիւն տըր-ւած ըլլալուն համար:

Կազմի փաշան երեսփոխանները լուսարանած է նոր կուսակցութեան պէտքերն, օգուտներն մասին, ըսելով որ եթէ կարգ մը սխալներ ալ գոր-ծուին, աչք պէտք է գոցել: Կազմի փաշան ըսած է նաև թէ ոչ մէկ կասկած ունի նոր կուսակցութեան անդամներուն բարեմտութեան վրայ և յանձնարարած է երեսփոխանե-րուն որ չափաւոր ըլլան իրենց քըն-նադատութեանց մէջ:

Այս գումարումին ներկայ եղող երեսփոխանները աւելի բարեկամա-կան զիրք մը բռնած են նոր կու-սակցութեան հանդէպ:

ՖԵՅԶԻ ՊԵՅ ԵՐԵՍՓՈՒԱՆ
ԸՆՏՐՈՒԵՑԱԻ

Էնկիւրի. — Կիւմիւշանէի երկ-րորդ կարգի ընտրողները, իսպի-նախագահին որոշումին համաձայն, իրենց քուէները Ֆէթիի պէյի տուած են: Այս կերպով, Ֆէթիի պէյի երես-փոխանութիւնը հաստատուած և ընտրական տեղեկագիրը հեռագրով ժողովին հաղորդուած է:

ԹԵՎՏԻԳ ԲԻՇԵՏԻ ՊԵՅ
ՍՈՍԿՈՒՆ ՀԱՍԱԻ

Մասկուս. — Թէվֆիք Բիշտի-պէյ այսօր հասաւ և զիմաւորուե-ցաւ Լիթվիւնի ու Գարախանի կող-մէ: զինուորական պատիւներ եղան: Ժողովուրդը թուրք գործավարը ըն-դունեց «Կուսուս» ներքով ու ծափե-րով:

30 ՄԵԼԻՈՒՆ ՎԱՐԿԸ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Եւրոպական յանձնաժողովը իր հաւանութիւնը յայտնած է իրեն յղուած եւրոպական օրինագիծին ու որոշած է որ, գործադրութեան հա-մար, ձեռքի տակ գտնուած 60 մի-լիոն ոսկիէն 30 միլիոնը «տրիվի» գնման յատկացուի: Այս գնումը օսմ. գրամատուցը պիտի ընէ և ա-մէն շարժու տեղեկութիւն պիտի տայ կառավարութեան:

ԹՈՒՐԿԻԱ ԵՒ ԻՐԱԳ

Անգարայի Իրագեան նոր Դես-պանը յայտարարած է թէ Թուրքիոյ և Իրագի մէջ պիտի կնքուի առեւ-տրական համաձայնութիւն մը ներ-կայ տարին չըրացած: Այս համա-ձայնութեամբ պիտի ջնջուին երկու երկիրներու համար գոգոնութեան պատճառ եղող առեւտրական զբ-ռարկութիւնները:

ԹՈՒՐԿԻԱ ԵՒ ՊԱՐՍԱԿԱՍԱՆ

Մտերմական են Թուրքիոյ և Պարսկաստանի յարաբերութիւնե-րը: Պարսկաստան ըմբոստներու դէմ Թուրքիոյ ցոյց տուած գործակցու-թեամբ հաստատուած է իր անկեղծու-թիւնը: Մահմանադուսի բանակցու-թիւններն ալ վերջնաւոր վրայ են:

ԻՍՄԵԹ ՓԱՇԱ ԿԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԻ

ԽԱԼԿ ԿՈՒՍԱԿԱՑՈՒԹԵՆՆ

Խալկ կուսակցութեան անդամ-ներէն ունանք, որոնք մինչև այսօր կը ծափահարէին անոր վարչական կարողութիւնը, սկսած են խիտ կերպով քննադատել զայն: Աֆիոն Գարահարարի Երեսփոխան Սիյ պէյի նախագահութեամբ գումարուած իսպի կուսակցութիւնը համամիտ գտնուած է այս քննադատութեան և Ալի պէյ իր պատրաստած բարեփո-խութեան ծրագիրը յանձնած է ժո-ղովին:

ԿՍՄԻԹՆԵՐ

ԱԲՈՐԸ ՇԱՏ ԵՂՈՂ ԳԻՒՂԻՆ
ԱՅԳԸ ՈՒՇ ԿԵԼԼԱՅ

Կը պատմուի թէ հին դարերու իմաստուններէն մին, իր ուսումնա-սիրական մէկ պտոյտի առթիւ կը գիշերէ գիւղացիի մը տան մէջ, ուր Արեւելեան հիւրասիրութեամբ կը պատուուի և սակայն հազիւ թէ ընթերցի պնակները վերցուած ու պատուները սեղանին վրայ գրուած էին, գիւղացիի հանդէպ լսելի կը-լան աքաղաղներու կուրծիկուներ որոնք ելեքտրական հոսանքի մը տպաւորութիւնը կը թողուն զրացի և հեռակայ աքորներու վրայ: Ինչո՞ք իմաստունը կարծելով որ ժամանա-կը անցած է, առանց տանտիրոջ հիւ-րասիրութեան դէմ մեղանշելու առ-տինան անփափկանկատ գտնուելու անձնական տկարութիւն ու յոգնա-ծութիւն պատրուակելով, ներողու-թիւն կը խնդրէ ու անկողին կը մո-նէ: Սակայն կուրծիկուներու իր-կերորդ հոսանք մը ծայր կուտայ, իմաստունը կարծելով որ ժամանա-կը անցած է, կը ջանայ իր աչքերը փակել և զանոնք բանալ Մօրփէսի գիրկին մէջ, բայց իրողը, քունը կը հեռանայ աւելի մտահոգելով զինքը յանկարծ կուրծիկուներու երրորդ և յաջորդաբար շարորդ, հինգերորդ և ըստ կարգի, հոսանքներ կը վեր-գովեն իմաստունին քունը, գիշե-րուան տալով անբնական երկարու-թիւն մը:

Առաւօտեան կանախ, մինչև գե-ղացիի տունն ու գիւղը ամբողջու-վին շարժման մէջ էր, մէջ բռնա-գործի իմաստունը, աչքերը չփակելով կը հարցնէ տանտիրոջ թէ ինչ պատ ճառաւ այս գիւղի մէջ գիշերը շատ երկար է ու առաւօտը ուշ: Գիւղա-պետը, որ իր կարգին բնական իմաս-տութեամբ օժտուած անձ մըն էր, մի զարմանալ յարգելի բարեկամ, շատ աքոր ունեցող գիւղի մէջ ա-ռաւօտը ուշ կը հանի, կը պատաս-խանէ:

Գիւղապետի մը այս իմաստա-լից ու այլաբանական բացատրու-թիւնը, ինչպէս նաև իր գիւղի ար-թուն աքորներու գործունէութիւնը շատ լաւ կը համեմատին մեր ազգա-յին գործերու, որոնց շուրջ ամէն բանիմաց հայ, խաղաղեղն ու մտա-ւորականէն սկսեալ մինչև հասարակ բանուոր, կը կատարեն վերաբնալ աքորներու դերը, ազգային գործե-րուն տալով իմաստուն մը մոլորե-ցնող գիշերուան երկարութիւնը:

Եւ ո՞վ է այն իմաստունը որ նոյնիսկ եկեղեցւոյ նուիրապետու-թեան գլուխը, թեմի մը թեմակալ Առաջնորդը կամ Ազգային Մալմիսի մը անշահախնդիր ու նուիրալ առ-գամ ըլլայ ան, պիտի չգայթակղի, պիտի չշուարի մարդ աքորներու թեր ու դէմ եւ նորանոր կուրու-լիկութեան առջև:

ՕՏՃԱՆ ՈՐԴԻ

ԱՆԳԱՐԱ ԱՌԱՆՑ ԾԾՈՍՄԻՒՆ

Ֆէթիի պէյի Անգարա մոտեկէն ա-ռաջ, օստիկանական տնօրէնը բոլոր օթմօս պիւնները վարձած ըլլալով, ժո-ղովուրդն ու նոր կուսակցութեան յարող երեսփոխաններ հետիտուն մի-նչ և կաշարան գացած ու ծափերով գիւղացւոյն եւ Ֆէթիի պէյը:

ՊԵՅՐՈՒԹԱՅԱՅ ԿԵԱՆԲ

ՌԱՄԱԿԱՐ ԱԿՈՒՄԲԸ ԽՈՒՋԱՐԿՈՒՄՍ

Ոստիկանութիւնը խուզարկութիւններ կատարած է նախ ատամ. նարոյժ Պրն. Յովսէփ Եօզղատեանի բնակարանը ապա Ռամակար կուսակցութեան ահուժը: Համաձայն մեր քաղաք տեղեկութեանց այս խուզարկութիւնները Հալէպի ծառայողները իրենց հետեւին: Ոչ մէկ վրէժնակար կամ կասկածելի բան գտնուած է. ամօթ հեղինակներուն:

ԻՐԵԻ ՀԱՍՏԱՆԱԿԱՐ

Քէմփի Թաղական Խորհուրդի Գանձապահ Պրն. Յակոբ Հայթեան որ իր պատուաւորութեամբ ու ազգագործուն ներդրումով սիրուած մի անձնավորութիւն է, ամսոյս 2 ին կէսը ատաղժ տալիս իր ընտանիքին: Սպասուելով իր ներկայանալու հրաւեր ստացած է:

Կառկած է կայ թէ գարձեալ միւսնոր պղտոր աղբիւրներէ բխած է այս ալ:

ԴԱՐՁԵԱԼ ԿՈՒԻ

Կարգ մը անպատասխանատու անհատներու պատճառաւ ատենէ մը իրեն քէմփայնակ Սանցինիւրու եւ Հանքնիւրու միջեւ կը տրեւէր ատեն իրեն որմէ յառաջ եկած է արեւոտ կոնի մը, ամսոյս 1 ին գիշերը: Հանքնիւրու հազարաւոր Արմենակ ծանր կերպով վերաւորած է, Սըքնի լեռնաշղթայի Պալիսան ու խոյս սուած: Անդրանիկի վիճակը մտահոգիչ է:

ՎԵՃԱԿԱՐԱՆ ԱՆԴԻԼԵԱՍԻ ՄԵՋ

Երեք օր Շալվարճեան - Ղազարոսեան բնակարանի մէջ հրաբուրուելէ վերջ վահափառ Տ. Սահակ Կաթողիկոս Սիւսի. 28 ին երկու շաբթի օր մեկնած է Անգլիայի Կաթողիկոսարանը ուր հարկ եղած նորոգութիւնները գրեթէ լրանալու վրայ են: Իմօտոյ կը կատարուի նա և Կաթողիկոսարանի պաշտօնէութեան կազմը: Տեղապահ Տ. Բարսէղ Սրբազան Կիւսէսեան մտադրած է մանկապարտէզ մըն ալ բանալ Անգլիայի յոյժ սակաւաթիւ և դաստիարակութեան շնորհէն զերկուստ փոքրիկներուն համար:

ՈՂԲԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ ՄԸ

Ատանա Քէմփի Տնօրէն, բնիկ Ատանայի Պրն. Նազարէթ Նորաիկեանի մէկ հարկի ու 20 տարեկան զաւակը Լեւոն, ամսոյս 1 ին գիշերը ժամը 10 ին երբ իր մօտաւոր ազգականներէն մէկուն հետ կ'անցնէր ձէլթունի թաղի ծովեզրեայ պողոտայէն, Գիւրսալ սրճարանի մօտ ֆրանսական զինուորական գաւառի մը տակ մնալով կնքած է իր բարուն կիսաքրէ:

Մեր խորին ցաւակցութիւնները տղացեալին ծնողաց ու պարաներուն:

Ին հանգիստ ննջէ՝ կ'ըսէ ժողովրդական առածը:

Որ ունիցի տկանըս լսելոյ լուսնէ:

ՋՈՋԵՐՈՒ ՕՅԱԼԸ

Պատահաբար կը մտնեմ պուրճահայեաց ծանօթ սրճարան մը, տեսնելով որ անոր իւրեքտրական անհամար լոյսերէ ողողուն պատուհաններէն դուրս կը պոռթկային, լոյսերէն աւելի առատ, պարուհիներու եւ նաւագարաններու հմայիչ ու գայթակղալի ձայներ: Սրճարանի ընդարձակ սրահը լցնող բազմազան հիւրերու մէջ զարմանքով տեսայ հայ լոյնքու խմբակ մը օգիտ սեղանին շուրջ բոլորուած ու լսուող ձայններէն մազնխաւացած. բաժանորդագրի մը կամ յօգուտ հանրային ձեռնարկի մը չնչին վճարումէ մը խուսափող այս Ազնուաշուքները արգիւթ ինչ կը վճարեն Քէմփէյ Եօզղի սրճարանատիրոջ:

Յաջորդիւ ընդարձակօրէն կը տեսնուին իրենց հետ:

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

«ԼԵՍԱՆ ԻՒԼ ՀԱՆ» ԿԵՂԵՐՍՈՒՄ

Պէյրուք հրատարակուող «Լեւոն Իւլ Հաւ» թերթը, որ նախագահական հրամանագրով դադրած էր անպայման կերպով, սկսած է վերահրատարակուիլ:

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախարարաց Խորհուրդը իր վերջին նիստին մէջ քննած է հետեւեալ խնդիրները:

1. Յունվար 1 էն սկսեալ գործադրուելիք պաշտօնէութեան կանոնադրի վաւերացում:

2. Քէմփայնի գաւառի ոռոգման և խմելու համար Նապի էլ Ասալի ջուրերու փոխադրութիւնը: Հանքոգուտ շինութեանց նախարարութեան պաշտօն տուած է այս ծրագրի գործադրութեան հսկելու համար: 10000 հնչ. ոսկի ծախք կանխատեսուած է:

ՊՈՐՃ ՀԱՍՈՒՑԻ ՀԱՅԿ. ՔԵՄԲԸ

Նախարարաց Խորհուրդը նկատելով որ Նապի ջուր հայկական քէմփի բնակիչները, իրենց բնակարանները տուրքէ զերծ կարծելով, Պորճ Համուտի թաղապետարանին չեն վճարած իրենց համար նշանակուած տուրքը, որովայն է հաղորդել թէ անոնք տուրքէ զերծ չեն:

Իսկ Նապի Պէյրուքի մէջ շինուող փայտաշէն պարագներու խնդիրն ալ նկատի առնելով, խորհուրդը անժամանակ արտօնած է անոնց շինութիւնը:

ՕՅՈՅԻ ԳՈՐԸ ԶԵՐԲԱՎԱԼՈՒՄ

Երեսուք Հալիլ Մօզուլ, որ ձէլթի, Շուէրի, Տէր էլ Գամէրի, Տաւուրի և Նապի էլ Քէմփի մէջ 5 օթներ առեւանգած ըլլալով կը հետապնդուէր, վերջապէս ձերբակալուած է:

ԼԵՒԱՆԱՆԵԱՆ ՍՐՈՐԹՅ ԳԼԻՊ

Ներ իսկ Րըլթի խնդրագրով մը առաջարկած է թաղապետարանին իրեն գետին մը տրամադրել Պէյրուքի մէջ Լիբանանեան Սրօրթի Գլըլիպ մը շինելու համար: Թաղապետական Խորհուրդը յանձնարարեց իր պաշտօն տուած է քննութիւն կատարելու համար:

ՔԵՄԲԵՐՈՒ ՔԱՆԴՈՒՄ

Կը տեղեկացուի թէ տեղական իշխանութիւնները կը զբաղին հայերու նոր քէմփերու քննել փոխադրութեան մը:

Անոնց նպատակն է քանդել ներկայ հայ քէմփը որ միջբրայնեռն եւ հիւանդութեանց կեդրոն եղած է:

ԶԻԹԱՊՏՈՒՂԻ ԲԵՐԲԸ ՏԿԱՐ

Համաձայն Երկրագործ. Նախարարութեան տեղեկատուութեան այս տարի շատ պակաս է ձիթապտուղի բերքը մասնաւորապէս Երեսուքի գաւառին մէջ:

Ասոր պատճառ կը նկատուի անձրեւներու նուազութիւնը:

ԿՈՒԻ ՍՊԱՆԴԱՆՈՅ ՄԵՋ

Պէյրուքի Սպանդանոցի մէջ կը լինէ մը ծագած ըլլալով, քաղմաթիւ Պէյրուքի վերաւորութեան ղեկավարին եւ գաւազանի հարուածներով: Ոստիկաններ գրաւած են մի քանի ատրճանակներ:

ՄԱՔՍԱՅԻՆ ԶԵՂՋ

Մաքսային սակերու քննիչ Յաննանտոզովը Բ. Գոմիսէրութեան մէջ հաւաքուած ու որոշած է զեղջեր ընել կարգ մը նիւթերու ինչպէս զիւրազանցութեան կեդրոններու լուսաւորութեան յատուկ գործիքներ և շատ մը նախնական նիւթեր:

ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՍՈՅՔԵՐ

Ներկայ տարուայ առաջին եռամսեային մաքսային հասցիքը եղած է 2 միլիոն 41723 Սուր. ոսկի: Բաղադատմամբ անցնող տարուան համապատասխան չըլմանի, շատ պակաս եղած է այս տարուանը:

ՊԵՅՐՈՒԹԱՅԱՅ ՊԱՂԱՅԻՆՆԵՐ

ԵՒ

ՕՄԱՆՈՒՇԱՅ ԳՈՅՈՒՐԵԱՆ ՍՄՈՒՄԵԱՑԵԱԼ Բ

4 Հոկտ. 930 Պէյրուք

ՎԱՐՁԱԿԱՆ Ի ԶԴ

Բրոք. Ս. Թումանյան վերջնականապէս դադրած է «Լիբանան»-ի եւ վարչութեան հետ կապ ունենալէ, իր կողմէ կասաւում կարգ մը դրամական զեղծարարութեանց համար զոր փաստող բուրքերու ծառք ի պահ դրուած էր մեր մօտ: Վարչութիւնն իր կողմէ կասաւում զանձնութեան համար ունէ պատասխանատւութիւն չըսանձներ:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԲԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր յարգելի բաժանորդներէն կը խնդրուի օր առաջ տեղեկացնել մեզ բրոք. Ս. Թումանյանի Թուրքի և Սօստոս ամիսներու ընթացքին ստացաւ իր փոխան կամ առանց ստացաւ իր տուած բաժանորդագրութիւնը հաշիւը:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՋԻ

Բնակավայրը և հարցէն անձանք ընդ Ատանայի Ուլաւան Երկանհարսեան ծնեալ Թալանեանի դէմ իր ամուսնոյն Յովհաննէս Երկանհարսեանի կողմէն Խորհուրդիս առջեւ ընտանեկան դատ մը բացուած ըլլալով, ներկայ ազգաբարձրով յընկալ Ուլաւան Երկանհարսեանի կը ծանուցուի որ, անձամբ կամ օրինակ կերպով նշանակուած փոխանորդի մը միջոցաւ ներկայանայ խորհուրդին 930 Նոյմ. 19 իւլ. օրը: Կէսօրէն վերջ ժամը 3 ին գուլմարուելիք նիստին, հաճառակ պարագային ի բացակայութեան պիտի ձեռնարկուի դատական քննութեան:

Դատաստանական Խորհուրդ 3-1 Հայոց Լիբանանի

ԱՄԱՆՈՍ ՔԵՄԲԻ [ՄԱՍԼԱՍ] ՄԵՐՈՒԹԱՆ ԵՐԿԱՍ. ՎԱՐԺ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷՂ ԵՒ ՆԱԽԱԿԻՐ.

Վարժարանիս բացումը տեղի կունենայ Հոկտ. 1 ին Զորեքաբէի: Հին և նոր աշակերտներու արձանագրութիւնք կը կատարուի Հոկտ. 1-8, ամէն օր միայն առաւօտեան ժամը 8-12 բացի շաբաթ և կիրակիէ: Զուգընթաց կը կատարուի նաև հարկ եղած քննութիւնները: Դասաւանդութիւնները կ'սկսին Հոկտեմբեր 9 ին:

Վճարումները կանխիկ երկու կամ երեք մասնավճարով:

Հրաւիրած ենք կարող և փորձառու ուսուցիչներ և վարժարանիս նպատակն եղած է նոր սերունդին տոնիկ դաստիարակութիւն մը տալ, ժամանակի և միջավայրի բոլոր պայմանները նկատի առնելով: Հայրերէն լեզուին հետ, մեծ ոյժ կը տրուի եկեղեցական եւ ազգային պատմութեանց, Ֆրանս ու Արաբերէն լեզուներու եւ գիտութեանց ուսուցման:

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆՔԱՅԻՆ

ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարուան երկրորդ եռամսեային Բ. Գոմիսէրութիւնը ստացած է 9 խնդրագրներ, Սուրիոյ և Լիբանանի մէջ ծծումբի եւ նիւթի հանքային խուզարկութեանց համար:

Հաճախելի չըլմանի յատուկ և տարբեր խուզարկութիւնները Ասֆալթի հանքերու Ընկերութիւնը մեծ գործունէութիւն ցոյց կուտայ և արդէն պաղ ասֆալթի գիւղը ըրած է:

ՄԻՀՐԱՆ ԱՂԱԶԱՐԵԱՆ

ԲԱՑԱԾ Ե ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

ԴԻՄԵԼ. — Mihran Aghazarian B. P. 606 Beyrouth

10—6

[Gr. Liban]

ՄԻՀԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Դաւանակցութիւն

Ազգ. Դաւանակցութիւնը ընդունեցաւ սեղեկագիր մը որով կ'առաջարկուի պատերազմի սպառնալիքի ենթակայ ռեւէ սէրութեան 120 միլիոն ոսկի ճրանքի նիւթական օգնութիւն մը ընդունիլ:

Ֆրանսա եւ Թօմփին

Հանգիւնէն կը սեղեկացուի թէ 44 համայնական մանուան դատաւարսուած են Ռուսիոյ մէջ: Հանուայէն կը սեղեկացուի թէ Թօմփինի ներկայացուցչական խորհուրդը իր վստահութիւնը եւ Ֆրանսայի հետ համագործակցութեան պատրաստակամութիւնը յայտնած է:

Ժօրժ Գլօրի Փորձերը

Գիտութեանց Կանադր հետագիր մը ստացաւ Ժօրժ Գլօրէ որ կը յայտնէ թէ Հալանայի մեջ ծովային ջերմութեան ոյժի մասին կատարուած փորձերը հիմնալի արդիւնք տուած են:

Թրֆօ Սօլիէր Համաձայնութիւն

Արսալին Գործավար Թէվֆիկ Բիւսիւ պէլ խանդավառութեամբ ընդունուած է Մոսկովայի մէջ, Բուսական «Իզվէստիա» թերթը կը գրէ թէ Բուսիոյ օգնութեամբ պիտի դարձանուի Թուրքիոյ սնտակական ծագմամբ. իսկ Թրֆօ-Բուս միութիւնը պիտի պայքարի արեւմտեան կայսերապաշտութեան դէմ:

Նանսէնի Յաջորդը

Ազգաց Դաւանակցութեան Գաղթականաց Գօմիսէր ընտրուած է, Ողբացեալ Նանսէնի սեղ, Պր. Մախ Հիւպէր, Զուրեք-Բիւսի իրաւաբանութեան Բրոքէտէօր, որ վերջերս մեծած էր իբրեւ իրաւաւար Ասեանի անդամ ծառայել:

Ի որ Համբայ Թուրքիոյ եւ Իրաքի մէջ

Թուրքիոյ եւ անգլիական ընկերութեան մը միջեւ կայացած համաձայնութեամբ Իրաքի եւ Թուրքիոյ միջեւ պիտի ինքնաւարժի մը ճամբայ մը:

Թուրքիա. Նոր Կուսակցութիւն Մ'ալ

Իսմէր փաւայի մօր դանիլը երեսփոխանական ընտրութեանց համար ընդունուած է երկրորդ կարգի ընտրութեան ձեւը օր իրեզերական ձեւ է: Ընդունուած է նաեւ սեղական դրամի կայունացումը եւ երկրագործութեան բարձրացումը:

Կ. Պոլսէն առնուած լուրերու համաձայն Ժողովրդ. Հանրապետ. Կուսակցութիւն անունով մօր կուսակցութիւն մ'ալ կազմուած է:

Հ զ Կ ա ս տ ա ճ

Ճոյցեր կը բարունակուին: Նէմիթայի մէջ ցուցարար մը սպաննուած, 45 հոգի հիւանդանոց փոխադրուած են: Մօրապապի մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ եղան: Ոստիկաններ կրակ բացին ցուցարարներու դէմ որոնք սեղական իսլամ խորհուրդի ընտրութիւնը արգիլել կ'ուզէին:

Պատուիրակութիւնները Լոնտոնի Մէջ

Ժընէվէն Պրն. Հէնսէրընի հետ Լոնտոն եկած են Բիւսական կայսրութեան բոլոր պատուիրակները ներկայ գտնուելու համար կայսերական խորհրդատուութիւն: Աւստրալիական կառավարութեան օրով կայացած առաջին կայսերական ժողովն է ասիկա:

Ֆրանսա Կամրացնէ Սահմանագրութիւն

Պատերազմական Նախարար Պրն. Մաթէնօ եւ Զօրավար Վէլլան, բանակի Սպայակոյթի պէտք յառաջիկայ բարք անձամբ պիտի քննեն Գերմանական Սահմանագրութիւն ամբողջութեամբ:

Աւստրիական Նոր Դաւանակցութիւն

Պրն. Վօկուան կազմեց մօր դանիլը: Նախկին Բարսու դար Սէյրէի յանձնարած է Արսալին Խորհրդակցութեան բրդ-բաժնարը:

Թուրքիոյ Նոր Դաւանակցութիւն

Իսմէր փաւայի կազմած մօր Դաւանակցութեան, Ղազիի նախագահութեամբ, գումարած է իր ստալինի նիւթը և ստալին իսլամ ձեռագիր մը օր մեծապէս արգիլել պիտի ըլլայ մախրոզէն:

